

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 250900 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից՝ 136800-ը քաղաքաբնակներ են (54.5%), 114100-ը՝ գյուղաբնակներ (45.5%):

2019թ. ընթացքում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 219.9 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 208.1 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն ավելացել են 5.7%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների ավելացումը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ մշակող արդյունաբերության և հանքագործական արդյունաբերության ցուցանիշների ավելացմամբ: Այսպես, 2019թ. մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 150.9 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 20.0 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 15.3%: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում սննդամթերքի (2.2%), խմիչքների (34.5%), հիմնային մետաղների (44.1%) արտադրության ճյուղերում: Հանքագործական արդյունաբերության ոլորտում արտադրության ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են 502.7 մլն. դրամի չափով (աճը կազմել է 14.7%) կամ արտադրվել է 3.9 մլրդ. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը կազմել է 62.7 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է 10.1 մլրդ. դրամով կամ 13.9%-ով:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները հաշվետու ժամանակահատվածում ավելացել են 5.5%-ով կամ իրացվել է 221.4 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 209.9 մլրդ. դրամի դիմաց:

2019թ. արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 167.3 մլրդ. դրամ, իսկ արտաքին շուկայում՝ 54.1 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվել է 34.8 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 19.3 մլրդ. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել են 20.8%-ով:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 69.6 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 6.8 մլրդ. դրամով կամ 10.8%-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 135.1 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 15.7 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 13.1%:

2019թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը կազմել է 70.5 մլրդ. դրամ նախորդ տարվա 73.0 մլրդ. դրամի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում կատարվել են 26.1 մլրդ. դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 9.4%-ով: